Արձանագրություն 3

ՀՀՄՆԳՀԱՇՁԲ-19/60 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերականգնողական աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 29.10.19թ.
ժ.12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կարեն Սիմոնյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
	Ստեփան Ղազարյան /գնահատող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
	Սերոբ Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Անի Թաշչյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին

(Կ. Սիմոնյան)

1.1 «Շինարար-97» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «Շինարար-97» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և բավարարում է «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին

2.1 «Շինարար-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

2.1.1 Ներկայացված համանման (նմանատիպ) պայմանագիրը, ներառյալ հավելվածները, համաձայնագրերը և հանձնման-ընդունման արձանագրությունները հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.1.2 Բացակայում է ներկայացված համանման (նմանատիպ) պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 համաձայնագիրը, որը կրկին պետք է հաստատված լինի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.1.3 Թիվ 3.1 Հավելվածը լրացված է թերի՝ բացակայում են սարքերի արտադրության տարեթվերը: Բացակայում են պահանջվող տորկրետ իրականացնող և շարժական էլեկտրասնուցող սարքերի տեխնիկական անձնագրերը, որոնք կրկին պետք է հաստատված լինեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.1.4 Ներկայացված Հավելված 3.2-ում հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների աշխատանքային փորձին վերաբերող ժամանակահատվածը և գործունեության ոլորտն ու կատարած աշխատանքը չեն համապատասխանում հրավերով պահանջվող ժամանակահատվածին, գործունեության ոլորտին և կատարած աշխատանքին:

2.1.5 Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների դիպլոմները, անձնագրերը և համաձայնագրերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.1.6 Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների կողմից տրված գրավոր համաձայնագրերը չեն համապատասխանում հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետի գ) պարբերությամբ սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ

3.1 Հիմք ընդունելով << կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Շինարար-97» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ս/թ նոյեմբերի 4-ին, ժամը՝ 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց ս/թ նոյեմբերի 4-ին, ժամը 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կարեն Սիմոնյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
	Ստեփան Ղազարյան /գնահատող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
	Սերոբ Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Անի Թաշչյան

5. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու, հայտը գնահատելու և գնահատման արդյունքների մասին

(Կ. Սիմոնյան)

5.1 «Շինարար-97» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և սահմանված կարգով շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած անհամապատասխանությունները:

5.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «Շինարար-97» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և հայտարարել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով <<Գնումների մասին>> << օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Կ. Սիմոնյան /նախագահ/

Հ. Հովսեփյան

Ս. Ղազարյան

Ա. Ստեփանյան

Ս. Գևորգյան

Ա. Թաշչյան /քարտուղար/